ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«ՖՈՐԱ» ՍՊԸ-Ի ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼԻ ՄԻՋԵՎ ՀԱՍՏԱՏՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

Վարձակալը, ստորագրելով Վարձակալության պայմանագիրը, ամբողջությամբ ընդունում է սույն Կանոններով նախատեսված պայմանները

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1. «Ֆորա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ «**Ընկերություն**» կամ **«Վարձատու»**) վճարի դիմաց վարձակալի (այսուհետ նաև՝ «Վարձակալ») ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում տրանսպորտային միջոցը՝ առանց նրան կառավարման ու տեխնիկական շահագործման համար ծառայություններ մատուցելու (այսուհետ նաև՝ **«Գույք»)**՝ սույն կանոնների (այսուհետ նաև՝ «Կանոններ») և Վարձատուի ու Վարձակալի միջև կնքված վարձակալության պայմանագրի (այսուհետ նաև՝ **«Պայմանագիր»**) դրույթներով սահմանված կարգով և պայմաններով:

1.2. Սույն Կանոններով չնախատեսված հարցերը կարգավորվում են Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Սույն Կանոնները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը համարվող փաստաթուղթ: Սույն Կանոնների և Պայմանագրի դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գերակայում է սույն Կանոնները:

2. ԱՄՐԱԳՐՈՒՄ

2.1. Գույքի ամրագրում իրականացնելիս պետք է Վարձատուի կողմից տրամադրվող փաստաթղթում նախապես հստակ պետք է նշում կատարվի Գույքի մոդելի, դրա շահագործման ամսաթվի, վարձակալության տրամադրման սկիզբնաժամկետի և վերջնաժամկետի վերաբերյալ տեղեկատվություն (այսուհետ նաև **«Վարձակալության պայմաններ»**):

2.2. Անհրաժեշտության դեպքում պետք է նաև նշում կատարվի այն աքսեսուարների մասին (օրինակ՝ մանկական նստատեղ), որոնցով Վարձակալը ցանկանում է, որ Վարձակալված ավտոմեքենան հագեցված լինի:

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

3.1. Վարձակալի կողմից ամրագրումն իրականացնելուց և Վարձույթի պայմանների շուրջ Վարձատուի հետ համաձայնություն ձեռք բերելուց Վարձատուի և Վարձակալի միջև կնքվում է Պայմանագիր:

3.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր, որոշակի ժամկետով:

3.3. Պայմանագրի նկատմամբ չեն կիրառվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ նաև՝ **«Օրենսգիրք»**) անորոշ ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը վերսկսելու մասին կանոնները:

3.4. Գույքը Վարձակալին է տրամադրվում սույն Կանոններով և Պայմանագրում նշված ժամկետով և պայմաններով:

3.5. Վարձակալության ժամկետի երկարաձգման կամ Վարձակալության պայմանների փոփոխման դեպքում կողմերը կնքում են վարձակալության նոր պայմանագիր:

4. ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

4.1. Վարձակալը պարտավոր է վճարել Գույքի վարձակալության դիմաց՝ Պայմանագրում և/կամ Պայմանագրի անբաժանելի մասը համարվող այլ փաստաթղթերում նշված սակագների, հաշվարկների համաձայն:

4.2. Ընկերությունը պետք է Պայմանագրում և/կամ Պայմանագրի անբաժանելի մասը համարվող այլ փաստաթղթերում Գույքի վարձակալության հստակ գնանշում կատարի կամ որևէ կերպ նույնականացնի տվյալ Գույքին համապատասխան գնացուցակով սահմանված գումարի չափի և/կամ վերջինիս հաշվարկման կարգի վերաբերյալ:

4.3. Պայմանագրի գինը հաշվարկվում է ներքոնշյալ վճարների հիման վրա.

4.3.1. Բազային վճար,

4.3.2. Ապահովագրական/փոխհատուցման վճար,

4.3.3. Լրացուցիչ վճար (աքսեսուարների համար վճարվող վճար):

4.4. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով և անկանխիկ եղանակով՝ Վարձատուի նշած բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

4.5. Վարձակալն՝ ի ապահովում իր պարտականությունների լրիվ կատարման, Պայմանագրի համաձայն Վարձատուին վճարում է ապահովագումար Պայմանագրում նշված գումարի չափով: Ապահովագումարը վերադարձվում է Վարձակալին վերջինիս կողմից Պայմանագրով սահմանված բոլոր պարտավորությունները պատշաճ կատարելու դեպքում:

5. ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՎԱՅՐՆ ՈՒ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Վարձատուն Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում Գույքը՝ Պայմանագիրը կնքելուց և Վարձակալի կողմից Պայմանագրի ամբողջ գումարը վճարելուց անմիջապես հետո կամ կողմերի միջև Պայմանագրով նախատեսված ժամկետում:

5.2. Գույքը Վարձատուի կողմից Վարձակալին է տրամադրվում Ընկերության գտնվելու վայրի հասցեում:

5.3. Կողմերի համաձայնությամբ Վարձակալի կողմից Գույքի ստացման վայրը կարող է լինել նաև այլ հասցե, քան Ընկերության գտնվելու վայրի հասցեն է:

5.4. Վարձակալը պարտավորվում է Գույքը վերադարձնել Վարձատուի գնտվելու վայրի հասցեում:

5.5. Եթե Վարձակալը, առանց Վարձատուի համաձայնության, հանձնում է Գույքը Պայմանագրով նախատեսված վերադարձի հասցեից տարբերվող այլ հասցեում, ապա Վարձակալը կրում է Ընկերության կողմից կրած փաստացի ծախսերին և վնասին համարժեք գումարի չափով գումար փոխհատուցելու պարտավորություն, ներառյալ այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են Գույքը Պայմանագրով նշված հասցե տեղափոխելու համար:

5.6. Գույքը Վարձատուից ստանալու ժամը հստակ նշվում է Պայմանագրում կամ Պայմանագրի անբաժանելի մասը համարվող որևէ փաստաթղթում:

5.7. Պայմանագրի ժամկետը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով Գույքի ստացման օրն ու ժամը: Վարձակալը պարտավոր է վերադարձնել Գույքը Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտին՝ ժամային ճշտության պահպանմամբ: Վարձակալի կողմից Գույքի վերադարձը Պայմանագրում նշված ժամկետից 30 րոպե և ավելի ուշացնելու դեպքում հիմք է Վարձատուի կողմից Վարձակալից մեկ ամբողջ օրվա վարձավճարը գանձելու համար, եթե ավելի պակաս ժամկետ Պայմանագրով նշծված չէ:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Վարձատուի իրավունքները.

6.1.1. Վարձատուն իրավունք ունի Վարձակալից պահանջել և միաժամանակ հսկողություն սահմանել, որպեսզի Գույքն օգտագործվի Պայմանագրով և սույն Կանոններով սահմանված պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:

6.1.2. Վարձատուն իրավունք ունի Վարձակալից պահանջել վաղաժամկետ լուծել Պայմանագիրը և հատուցել հասցված վնասը, եթե Վարձակալը Գույքից օգտվում է Պայմանագրով և սույն Կանոններով սահմանված պայմաններին և նշանակությանն անհամապատասխան:

6.1.3. Գույքի վնասման, հափշտակման/գողության կամ դրա մասերի հափշտակման/գողության դեպքում Վարձատուն իրավասու է պահումներ կատարել ապահովագումարից, ինչպես նաև գանձել ողջ ապահովագումարը: Եթե ապահովագումարը չի փոխհատուցում Պայմանագրի և սույն Կանոնների դրույթների պայմանների խախտման հետևանքով Վարձատուին հասցված վնասը, ապա Վարձակալը պարտավոր է փոխհատուցել այն չբավարարող գումարի չափով:

6.1.4. Վարձակալի կողմից Գույքի վերադարձը Պայմանագրում նշված ժամկետից 30 րոպե և ավելի ուշացնելու դեպքում Վարձատուն իրավունք ունի վերջինից գանձել մեկ օրվա վարձավճար:

6.1.5. Եթե Վարձակալը Գույքը չի վերադարձնում լրիվ լիցքավորված վիճակում, ապա Վարձատուն իրավունք ունի գանձելու 1000 դրամ յուրաքանչյուր լիտր վառելիքի դիմաց: Վարձակալը կարող է նաև նախապես վճարել Գույքի

վառելիքի բաքի ողջ տարողությամբ վառելիքի արժեքը՝ շուկայական գներով և Գույքը վերադարձնել առանց վառելիքի առկայության: Ընդ որում, եթե Գույքը վերադարձնելիս դրանում առկա կլինի վառելիք, ապա այդ դեպքում Կողմերի միջև գումարի հաշվանցում կամ Վարձակալին գումարի վերադարձ տեղի չի ունենալու:

6.1.6. Եթե Վարձակալը Պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի պահանջել վարձավճար՝ կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար:

6.1.7. Վարձակալի կողմից Գույքն առանց տեղեկացնելու 24 ժամից ավել պահելու դեպքում Վարձատուն իրավունք ունի Գույքը համարել գողացված կամ հափշտակված և/կամ ՀՀ օրենսդրության մեկնաբանման տեսանկյունից որևէ կերպ գողացված և դիմել իրավապահ մարմիններին:

6.2.Վարձատուի պարտավորությունները.

6.2.1. Վարձատուն պարտավորվում է Գույքը Վարձակալին հանձնել տեխնիկապես անթերի վիճակում, այնպիսի վիճակում, որպիսին Վարձատուն հանձնել է Վարձակալին,

6.2.2. Վարձատուն պարտավորվում է իր հաշվին իրականացնել վերանորոգումը (այդ թվում ընթացիկ և կապիտալ) և ռեգուլյար տեխնիկական սպասարկումը, եթե դրանք չեն առաջացել Վարձակալի մեղքով, կամ եթե չեն առաջացել Վարձակալի կողմից Գույքի նկատմամբ ոչ բարեխիղճ գործողությունների ընթացքում/հետևանքով:

6.3. Վարձակալի իրավունքները.

6.3.1. Վարձակալն իրավունք ունի վարել միայն Պայմանագրում նշված տարածքում,

6.3.2. Վարձակալն իրավունք ունի իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձանց՝ միայն Վարձատուի նախնական գրավոր համաձայնությամբ, որը կարող է նախատեսվել Պայմանագրով կամ Պայմանագրի անբաժանելի մասը համարվող փաստաթղթով:

6.4. Վարձակալը պարտավորվում է.

6.4.1. Գույքը վերադարձնել Վարձատուին Պայմանագրում նշված ժամկետում և վայրում, մաքուր վիճակում, լրիվ լիցքավորված, ինչպես նաև վարձակալության օրը կազմված հանձնման-ընդունման ակտին (եթե հանձնման-ընդունման ակտի վերաբերյալ առկա է Պայմանագրում նշում) համապատասխան ողջ կոմպլեկտավորմամբ և պատշաճ տեխնիկական վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը,

6.4.2. Գույքի շահագործումից առաջ ծանոթանալ Գույքն արտադրող գործարանի կողմից մշակված Վարձակալված ավտոմեքենայի օգտագործման հրահանգներին,

6.4.3. Չօգտագործել Գույքը որպես քարշակ այլ տրանսպորտային միջոցների համար,

6.4.4. Չօգտագործել Գույքը մրցավազքերում, ուսուցման, անանցանելի ճանապարհներին վարելու, բեռնափոխադրումների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը հակասող որևէ այլ նպատակով, եթե Պայմանագրով նախատեսված չէ հստակ Գույքի վարձակալության նպատակ,

6.4.5. Ապահովել լիակատար անվնաս վիճակը Պայմանագրով նախատեսված ժամկետներում,

6.4.6. Վարձատուի պահանջով ժամանակին տրամադրել Գույքը տեխնիկական սպասարկման և պետական տեխնիկական վերազննումն անցնելու համար,

6.4.7. Իր հաշվին վճարել Գույքի կայանատեղիների համար, մեքենայի վարձակալության ընթացքում տեղի ունեցած բոլոր տուգանքներն ու այլ գանձումները: Վարձատուի կողմից այդ գումարների վճարման դեպքում Վարձակալը պարտավորվում է վերջինիս ամբողջ չափով փոխհատուցել դրանք,

6.4.8. Վարձակալի պահանջով ներկայացնել է իր վարորդական իրավունքը հաստատող փաստաթղթերը,

6.4.9. Ընկերության կողմից համապատասխան պահանջի առկայության դեպքում ի լրումն վարորդական իրավունքի, ներկայացնել նաև այլ փաստաթղթերի պատճեններ՝ Վարձակալի ինքնությունը ստուգելու նպատակով,

6.4.10. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում 2 ժամվա ընթացքում վերադարձնել Գույքը Վարձատուին,

6.4.11. Փոխհատուցել Գույքի կամ դրա առանձին մասերի գողության/հափշտակման, վնասվածքների կամ ոչնչացման հետևանքով առաջացած վնասը, եթե այդ փոխհատուցումը չի փոխհատուցվում ապահովագրական ընկերության կողմից, անկախ նրանից, թե վնասը ում մեղքով է հասցվել,

6.4.12. Չհանձնել ենթավարձակալության, ինչպես նաև փոխադրման պայմանագրեր չկնքել երրորդ անձանց հետ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի միջև կնքվող Պայմանագրով,

6.4.13. Չվարել Գույքը՝ գտնվելով ալկոհոլի, թմրանյութերի կամ այլ թմրեցնող դեղամիջոցների ազդեցության տակ, ինչպես նաև վատառողջ կամ գերհոգնած վիճակում,

6.4.14. Չքանդել կամ չվերանորոգել Գույքը, նոր սարքավորում չտեղադրել, ինչպես նաև չիրականացնել որևէ փոփոխություն կառուցվածքի մեջ, եթե առկա չէ Վարձատուի համաձայնությունը: Այն դեպքում, եթե Վարձակալը, առանց Վարձատուի համաձայնության, քանդում, վերանորոգում կամ նոր սարքավորումներ է տեղադրում Գույքում, ապա Վարձատուն կարող է պահանջել իր կողմից մատնանշված գումարի չափով վնասի հատուցում, եթե գտնի, որ Վարձակալի կողմից կատարված վերոգրյալ գործողությունների հետևանքով Գույքը այլևս ենթակա չէ վարձակալության տրամադրման և/կամ Գույքի օգտագործման

պիտանելիության ժամկետը կրճատվել է որոշակի ժամանակահատվածով և/կամ Գույքը երրորդ անձանց վարձակալության տրամադրելու համար առաջարկվող վարձավճարի չափը զգալիորեն կրճատվել է:

6.4.15. Չհեռանալ Գույքից՝ այնտեղ թողնելով շարժիչի գործարկման բանալին, մեքենայի գրանցման փաստաթղթերն ու ապահովագրական քարտը,

6.4.16. Չփոխանցել Գույքը վարելու իր իրավունքներն ու պարտականությունները երրորդ անձանց, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրում:

7. ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1. Պայմանագիրը երկկողմանի համաձայնությամբ լուծելու դեպքում.

7.1.1. Վարձակալի վճարած գումարը Վարձատուի կողմից չի փոխհատուցվում, եթե Պայմանագրի տևողությունը չի գերազանցում 14 օրը:

7.1.2. 14 և ավելի օրերով կնքված Պայմանագրի դեպքում, Վարձատուն փոխհատուցում է միայն 15-րդ օրվանից սկսած ավել օրերի գումարը:

7.1.3. Այդ ժամանակահատվածի ընթացքում Վարձակալի կողմից սույն Կանոնների 6.4 կետով նախատեսված խախտումների բացակայության դեպքում Վարձատուն Վարձակալին է վերադարձնում ապահովագրավճարը՝ ամբողջ չափով:

7.2. Եթե Գույքի օգտագործման և տիրապետման ժամանակ Վարձակալը խախտել է Պայմանագրով կամ սույն Կանոններով նախատեսված պայմաններից առնվազն մեկը, ապա Ընկերությունը կարող է առանց ծանուցման կամ նախազգուշացման դադարեցնել Պայմանագիրը և անմիջապես պահանջել Վարձակալից վերադարձնել Գույքը:

7.3. Կանոնների 7.2 կետի համաձայն Պայմանագիրը Վարձատուի կողմից լուծելու դեպքում Վարձատուն Վարձակալին չի վերադարձնում Պայմանագրի հետագա օրերի համար Վարձակալի կողմից արդեն իսկ վճարված վճարը:

7.4. Կանոնների 7.2 կետի համաձայն Պայմանագիրը Վարձատուի կողմից լուծելու դեպքում, ապահովագրավճարը հետ չի վերադարձվում Վարձակալին:

7.5. Եթե ապահովագումարը չի փոխհատուցում Պայմանագրի պայմանների խախտման հետևանքով Վարձատուին հասցված վնասը, ապա Վարձակալը պարտավոր է փոխհատուցել վնասի փոխհատուցման չբավարարող մասի գումարի չափով:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով կամ սույն Կանոններով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, համաճարակը, համավարակը, գործադուլները,

հաղորդակցության միջոցների դադարեցումը, պետական մարմինների ակտը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով և սույն Կանոններով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է Պայմանագրով սահմանված ժամկետի 1/3-րդ մասից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես 1 օր առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Գույքով, դրա մեխանիզմներով, համասարքերով երրորդ անձանց պատճառված վնասի համար, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պատասխանատվությունը կրում է Վարձակալը:

9.2. Կողմը, որը չի կատարել կամ պատշաճ ձևով չի կատարել Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, պարտավոր է փոխհատուցել մյուս կողմին այդպիսով հասցված վնասը:

10. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Երրորդ կողմի ապահովագրություն (ԱՊՊԱ)

10.1.1. Գույքի ապահովագրությունը ներառում է Երրորդ Կողմին հասցրած վնասի փոխհատուցումը՝ առավելագույնը 1,800,000 ՀՀ դրամի չափով՝ նյութական վնասների համար: Անձնական վնասների դեպքում առավելագույն հատուցման չափն է 10,000,000 ՀՀ դրամը: Գույքը վնասվելու դեպքում, վնասի գնահատումն իրականացվելու է համաձայն վնասների գնահատման գրքույկի:

10.2. Ապահովագրության ամբողջական փաթեթ

10.2.1. Վնասի կամ գողության/հափշտակության դեպքում Ապահովագրության ամբողջական փաթեթը ազատում է Վարձակալին վնասված կամ գողացված/հափշտակված Գույքի վնասի փոխհատուցման պատասխանատվությունից:

10.3. Գույքի գողության/հափշտակման և/կամ ցանկացած տեսակի կորստի դեպքում Վարձակալը պարտավոր է.

(ա) հափշտակման/գողության մասին տեղեկանալուց հետո անմիջապես տեղեկացնել իրավապահ մարմիններին, ապահովագրական ընկերությանը և Վարձատուին,

(բ) Ապահովագրական ընկերությանը տրամադրել Գույքի գրանցման վկայականը, Գույքի վարման իրավունքի բոլոր փաստաթղթերը, Գույքի՝ Վարձատուից ստացված բոլոր բանալիների բնօրինակները, ՀՀ Ոստիկանության կողմից ստացված տեղեկանքը, որտեղ նշված կլինի Գույքի գողության/հափշտակման կամ կորստի կապակցությամբ Վարձակալի դիմելու ամսաթիվն ու ժամը:

10.4. Ճանապարհատրանսպորտային պատահարի (այսուհետ նաև՝ «ՃՏՀ») արդյունքում Գույքի վնասման դեպքում դրան հասցրած վնասի գնահատումը կատարվում է ապահովագրական ընկերության կողմից:

10.5. ՃՏՊ-ի արդյունքում Գույքի վնասման դեպքում դրա վերանորոգումը կատարվում է ապահովագրական ընկերության կողմից:

10.6. ՃՏՊ-ի արդյունքում Գույքի վնասման դեպքում Վարձակալը պարտավորվում է.

10.6.1. Դեպքի վայրից անհապաղ զանգահարել ապահովագրական ընկերություն և տեղեկացնել պատահարի մասին՝ առանց ավտոմեքենան տեղաշարժելու,

10.6.2. Գրանցել պատահարին մասնակից Գույքի պետհամարանիշը,

10.6.3. Հարցնել պատահարին մասնակից այլ մարդկանց և վկաների անունները և հասցեները,

10.6.4. Կատարել վթարում կատարվածի էսքիզագծում և հնարավորության դեպքում լուսանկարահանում,

10.6.5. Տեղեկացնել ՀՀ ոստիկանությանը կամ այլ համապատասխան լիազորված մարմիններին և ստանալ պատահարի վերաբերյալ արձանագրությունը,

10.6.6. Չընդունել որևէ պատասխանատվություն, մեղավորություն կամ չստորագրել նման հետևանքով որևիցե փաստաթուղթ:

10.7. Ապահովագրությունը չի գործում և Վարձակալը պարտավորվում է ամբողջությամբ փոխհատուցել Վարձատուին հասցված վնասը հետևյալ դեպքերում.

10.7.1. Ավտովթարի պահին Վարձակալը կամ երկրորդ վարորդը գտնվել է ալկոհոլի, թմրանյութերի կամ այլ թմրեցնող դեղամիջոցների ազդեցության տակ,

10.7.2. Վթարը տեղի է ունեցել ապահովագրության և հակահրդեհային պաշտպանության կանոնների խախտման հետևանքով (հրդեհավտանգ նյութերի պահում և տեղափոխում),

10.7.3. Գույքի վարումն իրականացվում է Վարձատուի կողմից չլիազորված և Պայմանագրում չնշված անձանց կողմից և/կամ վայրում,

10.7.4. Գույքն օգտագործվել է անանցանելի վայրերում վարելու կամ ուսուցման նպատակով կամ Պայմանագրով չնախատեսված այլ նպատակներով,

10.7.5. Եթե վնասված է սրահը, կախոցը և շարժիչը (բացառությամբ ՃՏՊ-ի արդյունքում առաջացած վնասվածքների),

10.7.6. Ապահովագրության կանոնների համաձայն ապահովագրվող դեպքեր չհանդիսացող իրավիճակների առկայության, մասնավորապես՝ ապահովագրության կանոններով պահանջվող փաստաթղթերի չտրամադրման կամ ոչ պատշաճ ձևակերպված փաստաթղթերի տրամադրման, ՃՏՊ-ի վայրից փախուստի կամ արբածության թեստ հանձնելուց խուսափելու, ապահովագրվող դեպքի առկայության պայմանների մասին ոչ ճշգրիտ տեղեկություններ հաղորդելու դեպքում,

10.7.7. Հանձնման-ընդունման ակտում նշված Գույքի լրացուցիչ սարքավորումն ապահովագրված չէ: Վարձակալը ամբողջական նյութական պատասխանատվություն է կրում լրացուցիչ սարքավորման բացակայության, վնասվելու կամ վերջինիս նկատմամբ այլ նկատողությունների պարագայում,

10.7.8. Վարձակալի կողմից Գույքին վնաս հասցնելու դեպքում վերջինս ամբողջությամբ հատուցում է վնասը:

11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Պայմանագրից կամ սույն Կանոններից կամ դրանց վերաբերյալ ծագող ցանկացած վեճ, ներառյալ Պայամանգրի գոյությունը, վավերականությունը և դադարեցումը և/կամ արբիտրաժային դրույթը, պետք է ուսումնասիրվի և վերջնականապես որոշվի «Optimus Lex» ՍՊԸ-ի մշտական արբիտրաժային դատարանի կողմից («Արբիտրաժային դատարան»): Գործի քննությունն արբիտրաժային դատարանում իրականացվում է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Վարձակալը սույնով հաստատում է, որ տեղեկացված է Արբիտրաժային դատարանում գործի քննության կարգի մասին: Արբիտրաժային դատարանի կանոնակարգը հրապարակվում է www.optimuslex.am կայքում՝ «Optimus Lex» ՍՊԸ-ի պաշտոնական կայքում: Վարձակալը, որ արբիտրաժային դատարանը պետք է ձևավորվի Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Հայցերի քննությունն իրականացվում է գրավոր փաստաթղթերի հիման վրա՝ առանց բանավոր լսումների, բացառությամբ Արբիտրաժային դատարանի կանոնակարգով նախատեսված դեպքերի: Արբիտրաժի լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ Երևան, Հայաստան:

12. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

12.1. Պայմանագրի և սույն Կանոններին համապատասխան ներկայացված ցանկացած ծանուցում պետք է կազմված լինի գրավոր ձևով և ստորագրված՝ ուղարկող Կողմի անունից գործելու համար լիազորված անձի կողմից: Այդպիսի ծանուցումը կարող է հանձնվել անձամբ, ուղարկվել փոստով՝ պատվիրված նամակով կամ փոխանցվել էլեկտրոնային կապով:

12.2. Ծանուցումը կհամարվի ստացված՝

(ա) առձեռն հանձնելու կամ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ փաստացի հանձնման ամսաթվին և ժամանակին,

(բ) էլեկտրոնային փոստով փոխանցման դեպքում՝ էլեկտրոնային ապարատով տպված փոխանցման արձանագրությամբ հաստատված ուղարկման ամսաթվին և ժամանակին, պայմանով, որ եթե էլեկտրոնային փոստով փոխանցումն իրականացվում է սովորական աշխատանքային ժամերից դուրս, ծանուցումը կհամարվի ստացված հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին:

12.3. Պայմանագրի մի կողմը պարտավոր է սույն կետով սահմանված կարգով կամ գրավոր (թղթային) ձևով մյուս կողմին տեղեկացնի իր և' էլեկտրոնային փոստի հասցեի և' հասցեի սույն Պայմանագրում նշված փոփոխության և նոր հասցեի մասին: Հակառակ դեպքում

համապատասխան հաղորդակցության և ծանուցման ուղարկումը Պայմանագրում նշված իրենց համապատասխան հասցեին կհամարվի պատշաճ ծանուցում: